ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<6>> ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թ. N15

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 6-ի N 4 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

Լ.ԿԱՐՈՅԱՆ

Գ.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ք.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ

2020 թվականի փետրվարի <<6>>

գ.Լեռնագոգ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ <<6>>-Ի
N 15 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-ի N 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

   /ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ/

2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

<<6>> ՓԵՏՐՎԱՐԻ 2020 թ. N16-Ն

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԳՈԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ Արդարադատության նախարարության 2020 թվականի հունվարի 30-ի պետական փորձագիտական եզրակացությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնագոգ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 8-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

1/ Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 3152795 ՀՀ դրամ 80 լումա/ երեք միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր իննսունհինգ ՀՀ դրամ ութսուն լումա/ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս համայնքի ավագանու որոշմամբ՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 06 դաս 01 5113 հոդվածին:

2/Ֆոնդային մասի ազատ մնացորդը՝ 8430000 ՀՀ դրամ 30 լումա/ ութ միլիոն չորս հարյուր երեսուն հազար ՀՀ դրամ երեսուն լումա/ ուղղել համայնքի ավագանու որոշմամբ՝ ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01 խումբ 06 դաս 01 5113 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

Լ.ԿԱՐՈՅԱՆ

Գ.ԳԱԼՍՏՅԱՆ

Վ.ՄԱՐԳՍՅԱՆ

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ք.ՄԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ

2020 թվականի փետրվարի <<6>>

գ.Լեռնագոգ